# Արձանագրություն N 1

## «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/4» գնանշման հարցման միջոցով

## գնում կատարելու հանձնաժողովի բացման նիստի

*Պատվիրատուի հասցեն ՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1* «06» «հուլիս» 2017թ.

ժ 11:00[1]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝

Սեյրան Զորողլյան- պահեստապետ

Արթուր Գասպարյան- տնօրենի օգնական

Ցոլակ Սարգսյան- սպասարկման ծառ. պետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

**I. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու հայտերի բացման մասին**

(Արման Աբրահամյան)[2]

Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 1)-ին ենթակետի նիստը նախագահող Արման Աբրահամյանը նիստը հայտարարել է բացված, հանձնաժողովի քարտուղար Օլգա Սահակյանը տեղեկատվություն է հաղորդել գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցել հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

1. Ընդունել ի գիտություն, որ.

սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | |
|---|---|---|
| 1. | «Էքսպրես Շին» ՍՊԸ | Հասցե՝ ք. Երևան, Արմավիրի մարզ, գ. Բամբակաշատ14/1 տ. 3, հեռ.՝ 011 55 00 07, էլ փոստ.՝express.shinllc@gmail.com |
| 2. | «Էկոմիքս» ՍՊԸ | Հասցե՝ ք. Երևան, Ա. Բաբաջանյան 60/2, հեռ.՝ +37441570400, +37495119611, 011 360360, էլ. փոստ ekomixllc@gmail.com |

2. Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 2-րդ մասի ա. և բ. ենթակետերի վերը նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատել է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացել համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

- համապատասխանում են՝ «Էքսպրես Շին» ՍՊԸ–ի, «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:[3]

3. Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 3-րդ ենթակետի հանձնաժողովի նախագահը հայտարարել է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացված են կից հավելված N 1-ում:[4]

4. Ընդունել ի գիտություն, որ.

- Հայտերը կազմված է եղել հրավերի պահանջներին համապատասխան
- հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

---

[1] Ըստ առաջին նիստի հանձնաժողովի որոշման՝ընթացակարգի հայտերի բացման նիստը հրավիրել շրջանակային համաձայնագիր կնքած մասնակիցներին ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթերրորդ աշխատանքային օրը:

[2] Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը:

[3] Ըստ հանձնաժողովի անդամների ներկայության:

[4] Եթե հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկությունները հնարավոր չէ ներկայացնել նույն արձանագրության միջոցով, թույլատրելի է կազմել հավելված, որը կդառնա տվյալ արձանագրության անբաժանելի մասը, ըստ տվյալ օրինակի:

5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա.

Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ մասի թիվ 1, 2 չափաբաժինների համար առաջին տեղն է զբաղեցրել «Էքսպրես Շին» ՍՊԸ –ն, ընդ որում թիվ 2 չափաբաժնի համար «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը գերազանցել է նշված չափաբաժնի համար նախահաշվային (գնումների պլանով նախատեսված) գինը: Նիստին ներկա «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի ներկայացուցչի հետ գների նվազեցման շուրջ վարված բանակցության արդյունքում ներկայացված գինը նվազեցվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

6. Հանձնաժողովը որոշեց՝ համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N 526-Ն որոշման 43-րդ կետի հայտերի բացման հաջորդ աշխատանքային օրը

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում.

2) հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում:

3) Էլեկտրոնային փոստի միջոցով հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N 526-Ն որոշման 39-րդ կետի հայտերի բացման հաջորդ աշխատանքային օրը Գրանցամատյանի՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հայտերի բացման նիստի արձանագրության հետ մեկտեղ հրապարակել տեղեկագրում:

Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N 526-Ն որոշման 46-րդ կետի

Գնման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով նիստ հրավիրել ոչ ուշ քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ժ. 17:00-ին: Նիստի անցկացման վայրը նույն հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արման Աբրահամյան

Անդամներ՝

Սեյրան Զորողյան

Արթուր Գասպարյան

Ցոլակ Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

Հավելված 1

# Գնային առաջարկներ

«Էքսպրես Շին» ՍՊԸ

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 5 | 6=3+4+5 |
| 1 | Տանիքի նյութեր (շիֆրեր) | 304 000 | 60800 | 364800 |
| 2 | Նյութեր ծածկույթի համար( իզոգամ) | 225000 | 45000 | 270000 |

«Էկոմիքս» ՍՊԸ

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 5 | 6=3+4+5 |
| 1 | Տանիքի նյութեր (շիֆրեր) | 319733,33 | 63946,67 | 383680 |
| 2 | Նյութեր ծածկույթի համար( իզոգամ) | 281600 | 56320 | 337920 |